Երեխայի Խնամատարության Համար Կարևոր Կետեր

Տեղեկացեք երեխայի խնամքի զանազան դրվածքների մասին:

- Երեխայի Խնամքի Ընտանեկան Տներ – Այս տեսակի խնամքն ընծայվում է երեխայի խնամք հայթայթողի տանը:
- Երեխայի Խնամքի Կենտրոններ– Երեխայի խնամքի կենտրոնները սովորաբար ավելի ընդարձակ են երեխայի խնամքի ընտանեկան տներից և կարող են բանեցվել անհատի, առևտրական հաստատության, դպրոցի, եկեղեցու կամ հանրային հաստատության կողմից:
- Բնակարանային Խնամք – Բնակարանային խնամքն այն է, որ ինչ–որ անձ գալիս է ձեր տուն՝ ձեր երեխային խնամելու: Այն կարող է լինել ընկեր, բարեկամ, դայակ կամ մանկան խնամող անձ:
- Տնային Խնամք Հայթայթողներ – Տնային խնամք հայթայթողները խնամում են ինչպես իրենց սեփական, այնպես էլ այլ ընտանիքների երեխաներին: Երեխաները խնամքի համար կգնան հայթայթողի տունը:

Երեխայի խնամքի վայրերն այցելեք երբ երեխաներն այնտեղ են:

- Քննեք, թե երեխայի խնամքի անձնակազմն ինչպես է կարդում, խոսում և խաղում երեխաների հետ:
- Ստուգեք, թե այն մաքուր և ապահո՞վ է:
- Ստուգեք, թե սննդարար կերակուր տրվո՞ւմ է:
- Ստուգեք, թե երեխաների համար կա՞ն զանազան խաղալիքներ:

Զրույցեք երեխայի խնամքի ծառայող(ներ)ի հետ. իմացեք թե՝

- Անձնակազմն ունի՞ հատուկ պատրաստություն:
- Խնամողներն ունե՞ն փորձառություն:
- Անձնակազմն այնտեղ գործո՞ւմ է բավականին երկար տարիներ:

Տվեք բազմաթիվ հարցեր, ինչպես՝

- Ի՞նչն է ձեզ հրապուրում երեխաների հետ գործելիս:
- Յուրաքանչյուր չափահաս քանի՞ երեխայի է խնամում:
- Ինչպե՞ս եք կարգապահության վարժեցնում երեխաներին: (Ստուգեք, որ նրանք երբեք չեն հարվածում կամ ցնցում երեխաներին:)
- Կարո՞ղ եմ ցանկացած ժամանակ այցելել:
- Ինչպիսի՞ ուսելիք և խմելիք եք հայթայթում:
- Ի՞նչ եք անում ստիպողական վիճակի դեպքում: Պատրաստություն ունե՞ք նախնական դարմանումի կամ CPR–ի գծով:
- Երեխան կարո՞ղ է տուն կամ կենտրոն գալ հիվանդ լինելիս:

Այլ խորհուրդներ, որ պետք է հիշել՝

- Զեռք բերեք կենտրոնն օգտագործող այլ ծնողների անվանացանկը և զանգահարեք նրանց:
- Զանգահարեք TrustLine–ին և ստուգեք երեխային խնամողներին:
- Ձեր հայթայթիչից պահանջեք իր DMV–ի տեղեկանքը, եթե նա մեքենայով տեղափոխում է երեխաներին:
- Վստահեք ձեր բնազդին և վարձեք մեկին, ումը դուք և ձեր երեխան հավանում եք:
- Առնվազն շաբաթը երկու կամ երեք անգամ զրույցեք ձեր հայթայթիչի հետ և նրա հետ կիսեք ձեր երեխայի մասին պատմություններ:

Երեխայի Հարմարություն Խնամքի Ընտրությունը

Ինչ եք կարող անել՝ երեխայի որակավոր խնամք գտնելու համար՝

Երեխայի որակավոր խնամք գտնելու համար օգնություն՞ն է պետք ձեզ:

Կալիֆորնիայի Երեխայի Խնամքի Աղբյուրների և Հանձնարարականների Ցանց՝ (800) 543-7793 *

Տրըստ Լինէ՝ (800) 822-8490 *

Երեխայի Խնամքի Կապ՝ (800) 543-7793 *

*Հայ օպերատորներ տրամադրելի են

©2003 First 5 California